

86/102

=

Հ. Ս. Խ. Զ. ՖԻՆՃՈՂԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱԾՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱՆ ՀԵՐԿԻ ՄԱՍԻՆ

83

ՅԵՐԵՎԱՆ — 1927

26 JUN 2018
336.21

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՑՐՈՒՄԿԱՆ ԳՈՐԾՄԱԴԻԲ ԿՈՄԻՏԵՑՔ
ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Միասնական գյուղատեսեսական հարկի կանոնագրությունը կի-
րարկության գնելու մասին

ԽՍՀ Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեն
և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1. Այս թվին հաստատված միասնական գյուղատես-
տեսական հարկի կանոնագրությունը գործադրության դնել
27/28 հարկային տարուց:

2. Միասնական գյուղարկի հարկային տարին սահ-
մանել մայիսի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ:

3. Հանձնարարել ԽՍՀ Միության ֆինանսների Ժողո-
վրդական Կոմիսարիատին մեկ ամսվա ընթացքում ներ-
կայացնել ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդին ի հաստատություն, միասնական գյուղարկի կա-
նոնագրությունը կիրարկության դնելուց հետո իրենց ուժը
կորցնող՝ ԽՍՀ Միության որենքների ցանկը:

Առաջարկել դաշնակից հանրապետությունների Ժո-
առվական Կոմիսարների խորհուրդներին մեկ ամսվա
ընթացքում հրատարակել դաշնակից հանրապետություն-
ների այն որենքների ցանկը, վորոնք հիշյալ կանոնագրու-
թյունը կիրարկության դնելուց հետո կորցնում են իրենց
ուժը:

ԽՍՀՄ Աննալոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ՝
Ա. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ՝
Ա. ՌԻԿՈՎ

ԽՍՀՄ Անդամանական Գործադիր Կոմիտեի Քարտուզար՝
Ա. ՅԵՆՈՒԿԻՉԵ

Մոսկվա 1927 թ.
2 ապրիլի 1927 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՅՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՏՎԱԾ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակայե գյուղատնտեսությամբ զբաղվող ամբողջ բնակչությունը, այլև կողեկտիվ տնտեսությունները (կոմմունաները, արտեխները և ընկերությունները) ու խորհրդային տնտեսությունները, վորոնք յեկամուտ են ստանում 2-րդ հոդվածում թված աղբյուրներից:

2. Հարկը հաշվվում և գանձվում ե ամեն մի առանձին տնտեսությունից, համաձայն այն ընդհանուր յեկամուտի, վոր նա ստանում ե դրամով կամ մթերքով սառցե թված աղբյուրներից.—

ա) դաշտամշակությունից,

բ) մարգագործությունից,

գ) խոշոր յեղջուրավոր և լծկան անասուններից,

դ) առանձին վայրերում՝ մանր անասուններից և արգյունաբերական բնույթ կրող գյուղատնտեսական հատուկ ձյուղերից, վորպես ե՝ բանջարաբուծություն, խաղողագործություն, պարտիզանություն, ծխախոտագործություն և այլն,

ե) վոչ գյուղատնտեսական վաստակներից:

3. Մանը անասուններից և գյուղատնտեսական հատուկ ձյուղերից ստացած յեկամուտները, ինչպես նաև այդ յեկամուտների առանձին տեսակները հարկման չեն

յենթարկվում այն վայրերում, վորտեղ ալդ յեկամուտները հարկից ազատելն անհրաժեշտ կդանեն դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները և համապատասխան նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները:

Վոչխարներից և այծերից ստացված յեկամուտն անպայման հարկվում ե Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունում, Ուզբեկստանի և Թուրքմենների Սոց. Խորհրդ. Հանրապետությունում, Բաշկորտայի, Դաղստանի, Կազակստանի, Կիրգիզիայի, Ղրիմի, Բուրյատ-Մոնղոլների և Մերձվոլգյան գերմանացիների ինքնավար Հանրապետություններում, Կալմկիների ինքնավար մարզում (օնձատե), Հեռավոր Արևելքի, Հյուսիսային—Կովկասան, Սիբիրյան յերկրներում և Աստրախանի, Որենքուրդի, Սամարայի, Սարատովի և Ստալինգրադի նահանգներում:

Մանուկյան.—Սույն Կանոնադրության 3-րդ և հետագա հոդվածներում նախատեսնված նահանգական և շրջանային գործադիր կոմիտեների իրավունքները և պարտականությունները տարածվում են, բացառությամբ համապատասխան հոդվածներում հատուկ հիշատակված դեպքերի, նաև նահանգական բաժանում չունեցող ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների, ինքնավար մարզերի և Ուզբեկստանի ՍԽ Հանրապետության շրջանների շրջանային գործադիր կոմիտեների վրա: ԱՄֆԽՀ-ում վերոհիշյալ իրավունքներն ու պարտականությունները իրազործվում են Վրաստանի, Հայաստանի և Աղբբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդները: Ներկա կանոնադրությամբ շրջանային գործադիր կոմիտեներ ասելով հասկացվում են շրջանացման յենթարկված վայրերի գործադիր կոմիտեները:

4. Գյուղատնտեսական միասնական հարկին յենթակա յեկամուտների աղբյուրները յենթակա չեն համապետական և տեղական վորևե ալդ հարկի:

Այն հողամասերը, վորոնց յեկամուտները յենթակա յեն միասնական գյուղատնտեսական հարկի, ինչպես նաև շենքերով բռնած այն հողամասերը, վորոնք անմիջորեն կապ ունեն գյուղատնտեսական ոգտագործման հետ, աղատվում են հիմնական և լրացուցիչ ռենտայից:

Միասնական գյուղարկի յենթակա տնտեսությունների կազմի մեջ մտնող շենքերն աղատվում են շենքերից գանձվող տեղական հարկից:

5. Քաղաքի սահմաններում գտնվող հողամասերի վրա գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք, անկախ նրանց մշտական բնակավայրից, գյուղատնտեսությունից ստացած յեկամուտներից պետք ե վճարեն կամ պետական յեկամըտային, կամ միասնական գյուղատնտեսական հարկ:

Այն քաղաքային վայրերի ցուցակները, վորտեղ հիշված անձինք պետք ե յենթարկվեն միասնական գյուղատնտեսական հարկի, կամ ալդ անձանց՝ միասնական գյուղարկի յենթակա կատեգորիաները — սահմանում են նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները:

6. Քաղաքում ապրող և քաղաքի սահմաններից դուրս գտնվող հողերի վրա գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք յենթակա յեն միասնական գյուղատնտեսական հարկի և չեն աղատվում քաղաքի բնակչության վրա տրվող հարկերից, բացառությամբ 4-րդ հոդվածի յերկրորդ և յերրորդ մասերում թված հարկերից:

7. Գյուղական վայրերում արհեստներով, տնախագործությամբ և նման աշխատանքներով զբաղվող անձինք, յեթե նրանք զբաղվում են նաև գյուղատնտեսությամբ, թեկուզ նրանք աշխատելիս լինեն միանձնաբար, կամ իրենց ընտանիքի անդամների ոգնությամբ, և կամ ունենան յերեք հոգուց վոչ ավելի վարձու աշխատավորներ, անկախ հատուկ սարքավորված արհեստանոց ունենալուց և մերենայական շարժիչներ գործադրելուց, չեն յենթարկվում պետական արհեստահարկի: Արդեմ պետական արհեստահարկի:



11-239459

հեստներից, տնայնագործությունից և նման զբաղմունքներից նրանց ստացած յեկամուտները մացվում են նրանց տնտեսության միասնական գյուղհարկի յենթակա յեկամըտի մեջ:

8. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա չեն և պետք եւ հարկվեն պետական արհեստահարկի և յեկամտահարկի որենքների համաձայն՝

ա) առևստուրը,

բ) 7-րդ հոդվածում մատնանշած չափերից ավելի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները,

գ) ապրանքային աղացները, վորոնք նախատեսված են ԽՍՀՄ կենտգործկոմի և Ժողկոմիսորհի 1926 թ. ոգոս-20-ի՝ ապրանքային աղացներից գանձվող արհեստահարկի վերաբերյալ վորոշմամբ («ԽՍՀՄ Որենքների հավաքածու» 1926 թ. № 57, հոդ. 414):

9. Այս անձինք, վորոնց աշխատավարձի վորեւե մասն արդեն յենթարկված ե (հոդ. 27) գյուղատնտեսական միասնական հարկի, ազատվում են աշխատավարձից գանձվող պետական յեկամտահարկից:

10. Միասնական գյուղատնտեսական հարկի չի յենթարկվում և պատշաճ դեպքերում հարկվում ե պետատական յեկամտահարկով այն աշխատավարձը, վոր ստացվում ե՝

1. ա) պարհարկի կարգով կատարված աշխատանքի համար,

բ) գյուղատնտեսության մեջ բատրակի կատարած աշխատանքի համար,

գ) ընտրովի խորհրդային պաշտոններ (գործադիր կոմիտեների և գյուղական խորհուրդների անդամների) վարելու համար,

դ) Փոխադարձ Ոգնության Գյուղացիական Ընկերությունների Կոմիտեներում և նրանց համապատասխանող

կազմակերպություններում, այլև գյուղական ստորին կոռպերատիվներում վարած ընտրովի պաշտոնների համար,

ե) գյուղական, գավառակային բժշկական և անասնաբուժական կազմի (բժիշկների, ատամնաբուժերի բուժակների, մանկաբարձուհների ևալին), գավառակային գյուղատնտեսների և նրանց ոգնականների, գավառակային հողաշինարարների և մելիորատորների, անտառապահների և նրանց ոգնականների ու անտառային պահակների, գյուղական ժողովրդական ուսուցիչների, ժողովրդական դատավորների, գյուղական միլիցիայի, վոլոստների և ռայոնների վիճակագիրների, գյուղական հիվանդանոցների և դըպոցների տեխնիքական կազմի աշխատանքի համար,

զ) գրական և կուլտ-լուսավորական աշխատանքների (գյուղթղթակից, խրճիթվար և ալին) համար.

2. 49-րդ հոդվածի «ա», «գ» կետերում հիշված զինվորական ծառայողների բավարարության բոլոր տեսակները.

3. պետական հաստատություններից ստացվող կենսաթոշակները:

11. Նահանգական և շրջանային գործադիր կոմիտեներին իրավունք ե վերապահվում՝

ա) իրենց յենթակա ամբողջ տերիտորիայի, կամ նրա մի մասի վրա միասնական գյուղատնտեսական հարկից ազատելու առանձին տնտեսությունների, կամ տնտեսությունների խմբակների վոչ-գյուղատնտեսական վաստակները այն պայմանով, վոր հարկ յեղած դեպքում այդ վաստակները հարկվեն պետական արհեստահարկի և յեկամտահարկի որենքների կարգով,

բ) թույլատրել վոլոստային և շրջանային հարկային հանձնաժողովներին հարկից ազատելու առանձին չքայլոր տնտեսությունների վոչ գյուղատնտեսական վաստակները:

12. Արգելվում ե միասնական գյուղատնտեսական

հարկի վրա վորեկ հավելում անել, ինչպես նաև միասնական գյուղատնտեսական հարկի հետ միասին մի հարկաթերթով ուրիշ հարկեր և տուրքեր գանձել:

ՀԱՏՎԱԾ II

ՀԱՐԿԻ ՅԵՆԹԱԿԱ ՅԵԿԱՄՑԻ ՀԱՇՎԵԼԸ

13. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա ամեն մի առանձին տնտեսության յեկամուտները հաշվում են գրամական միավորներով (ոռոբլիներով և կոպեկներով) հետագա հոդվածներում մասնանշած կարգով:

14. Դաշտամշակության յեկամուտը Ուզբեկստանի ՍԽՀ Թուրքմենստանի ՍԽՀ և ՌԽՖԽ Հանրապետության հետեւալ վայրերում՝ Բաշկիրիայի, Բուրյատ-Մոնղոլների, Դաղստանի, Կազախստանի, Կիրգիզստանի, Ղրիմի, Մերձգոլգյան գերմանացիների, Թաթարների և Յակուտների ինքնավար խորհրդական սոցիալիստական հանրապետություններում, Կալմիկների ինքնավար մարզում, Ուրալյան մարզում, Հեռավոր Արևելքի, Հյուսիսային Կովկասյան և Սիբիրյան յերկներում, Աստրախանի, Վարոնեժի, Ուրենքուրդի, Սամարայի, Սարատովի, Ստալինգրադի նահանգներում հաշվում են տնտեսության մեջ փաստորեն ցանված հողի տարածության համեմատ (ըստ ցանքի): Մնացած վայրերում դաշտամշակության յեկամուտը հաշվում են տնտեսության մեջ յեղած վարելահողի ամբողջ տարածության համեմատ (ըստ վարելահողի):

Ֆանորուրյուն.—1. Նահանգական և շրջանային գործադիր կոմիտեներին իրավունք են վերապահվում իրենց յենթակա ամբողջ տերիտորիայում, կամ նրա մի մասի վրա —դաշտամշակության յեկամուտը ըստ վարելահողի հաշվելու փոխարեն, հաշվել ըստ ցանքի:

2. Կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում դաշտամշակության յեկամուտն ամենուրեք հաշվում են ըստ ցանքի տարածության:

15. Այն վայրերում, վորտեղ դաշտամշակության յեկամուտը վորոշվում են ըստ ցանքի, հաշվառման յենթակա հողի տարածության մեջ և մասնում փաստորեն ցանած հողը, նրա մեջ հաշվելով նաև հատուկ մշակութների բոնած տարածությունը, յեթե նրանց յեկամուտը հաշվի չի առնվում 18-րդ և 24-րդ հոդվ. կարգով. այն վայրերում, վորտեղ դաշտամշակության յեկամուտը վորոշվում են ըստ վարելահողի, հաշվառման յենթակա հողի տարածության մեջ, բացի դրանից մտնում են նաև խամերը, հարուսները, խոզանները, ինչպես և նախրաստափերը, մերձագարակային և շենքերից ու բակից ազատ ագարակային հողերը:

Այն վայրերում, վորտեղ դաշտամշակության յեկամուտը վորոշվում են ըստ ցանքի, մարգագործության յեկամուտը հաշվելիս հաշվառման յենթակա յեն տնտեսության կողմից մշտապես ոգտագործող խոտհարքները, իսկ այն վայրերում, վորտեղ դաշտամշակության յեկամուտը վորոշվում են ըստ վարելահողի, հաշվառման յենթակա յեն տնտեսության մեջ գտնված բոլոր խոտհարքները — ջրով չփողողվողները, հարթավայրերի վրա գտնվողները, անջրդիները և անտառայինները:

17. Անասնապահության յեկամուտը հաշվելիս հաշվառման յենթակա յեն.—

ա) 4 տարեկանից վեր ձիերը, էղները, գոմեշները, եղերը, ջորիները, ուղտերը:

բ) յերեք տարեկանից վեր խոշոր յեղջուրավոր անասունները (բացի յեղներից և գոմեշներից):

գ) ձմեռած վոչխարներն ու ալծերը.

դ) դաշնակից հանրապետությունների ժող. կոմիս. Խորհրդի կողմից վորոշված տարիք ունեցող խոզերը:

Ֆանորուրյուն.—1. Անասունի տարիքը վորոշվում ե-

առ հարկադրման տարվա մայիսի 1-ը:

2. Դաշնակից հանրապետությունների ժող. կոմ. Խորհրդներին իրավունք ե վերապահվում առանձին նահանգների և շրջանների համար վորոշել հաշվառումից ազատվող մանր անասունների (վոչխար, այծ և խող) քանակը։ Այն տնտեսություններում, ուր մանր անասունների թիվը գերազանցում է մատնանշված քանակը, հաշվառման յենթակա յեն բոլոր անասունները։

18. Բանջարաբուծության, խաղողագործության, պարտիզանության և ծխախոտագործության յեկամուտը հաշվելիս հաշվառման ե յենթարկվում տնտեսության մեջ այդ մշակությների բռնած տարածությունը։ մեղվաբուծության յեկամուտը հաշվելիս հաշվառման յենթակա յետընտեսության մեջ յեղած փեթակների քանակությունը (ըլլջանակավոր և քթոցաձեւ)։

19. Դաշտամշակության, մարգագործության, անասնապահության, բանջարաբուծության, պարտիզանության խաղողագործության, ծխախոտագործության և մեղվաբուծության առանձին տնտեսությունների հարկի յենթակա յեկամտի գումարը վորոշվում ե համաձայն՝

ա) տնտեսության հողի (ցանքի կամ վարելահողի), խոտհարքի ու վերը հիշված հատուկ մշակությների դեսյատինների, անասունների ու փեթակների քանակության։

բ) տվյալ վարչա-տեղրիտորիալ միավորի համար սահմանված յեկամտի համապատասխան նորմաների։

20. Դաշնակից հանրապետությունների համար սահմանվում են ստորև թված աղբյուրների հետևյալ յեկամուտի միջին նորմաները (ոռուբլիներով)։

Դաշնակից հանրապետություններ	Մեկ դիմումի ՀՈՂԻ ՅԵԿԱՄՏԱԿԱՆ ԹԵԿԱՄԱՐՔԱԲԵՐՈՒ-		ՄԵԿ ԳԼՈՒԽ ԱՆԱՍՈՒՆԻ ԹԵԿԱՄԱՐՔ	
	ՀՈՂԻ ՅԵԿԱՄՏԱԿԱՆ ԹԵԿԱՄԱՐՔ	ՀՈՂԻ ՅԵԿԱՄՏԱԿԱՆ ԹԵԿԱՄԱՐՔ	ՀՈՂԻ ՅԵԿԱՄՏԱԿԱՆ ԹԵԿԱՄԱՐՔ	ՀՈՂԻ ՅԵԿԱՄՏԱԿԱՆ ԹԵԿԱՄԱՐՔ
Բ. Ս. Ֆ. հ. չ.	42	—	20	20
Բ. կ. լ. հ. ա. լ. ի. Ս. հ. չ.	52	—	36	30
Բ. կ. լ. լ. ո. ս. ի. ա. յ. ի. Ս. հ. չ.	50	—	33	25
Ս. Ս. Ֆ. հ. չ.	45	—	30	—
Ո. գ. ե. կ. ս. ս. ա. ն. ի. Ս. հ. չ.	30	—	—	18
Թ. ո. ւ. բ. լ. ի. ն. ս. ս. ա. ն. ի. Ս. հ. չ.	94	—	—	15
	35	—	—	—
			17	13
			15	15
			13	13
			13	13
			15	15
			12	10
			5	5
			2	2

21. Դաշնակից հանրապետությունների ժողովրդական
կոմիսարների խորհուրդները սահմանում են 20-րդ հոդ-
վածում մատնանշված աղյուրների յեկամտաբերության
նորմաները նահանգների և շրջանների համար։ Իսկ նա-
հանգական և շրջանային գործադիր կոմիտեներին իրա-
վաւնք ե վերապահվում գավառական (կամ նրանց համա-
պատասխանող) և ռայոնական գործադիր կոմիտեների հետ
համաձայնեցնելով, առանձին վարչատերրիալար միավոր-
ների համար դաշնակից հանրապետությունների ժողովրդական
կոմիսարների խորհուրդների սահմանած յեկամտա-
բերության նորմաները փոխել. այս դեպքում չպետք ե
փոփոխվի հիշված աղյուրներից յուրաքանչյուրից ստաց-
վող յեկամտի այն ընդհանուր գումարը, զորը դաշնակից
հանրապետության մեջ, նահանգում և շրջանում յենթակա-
յե հարկման, համաձայն այն նորմաների, վորոնք սահման-
ված են տվյալ հանրապետության, նահանգի և շրջանի
համար։

Ծանրություն. — Կազակստանի ինքնավար Խորհրդացին Սոցիալխոստական Հանրապետ., Հուսիսային-Կովկասյան, Սիբիրյան ու Հեռավոր-Արևելյան յերկրների և Ուրալի մարզի համար յեկամտաբերության նորմաները սահմանում են ԱՄֆիչ ժողովրդական կոմիսար. Խորհրդագը, իսկ նրանց կազմի մեջ մտնող նահանգների և շրջանների համար — կազակստանի ինքնավար Խորհրդագին Սոց. Հանրապետության ժողովրդական կոմիս. Խորհրդագը, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները ըստ պատկանելույն, պահպանելով այն կարգը, ըստ վրբի ամեն մեկ առանձին աղբյուրի հարկի յինթակա յեկամտի ընդհանուր դումարը մնում է անփոփոխ:

22. Դաշնակից հանրապետությունների համար սահմանվում են ներքոնիշյալ աղբյուրների յեկամաբարության հետևյալ ուղեցուցից (մոտավոր) նորմաները (սուբլիներով).—

10

23. Ղեկավարվելով 22-րդ հոդվածում մատնանշված ուղեցույց նորմաներով, դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները սահմանում են նահանգների և շրջանների համար համապատասխան աղբյուրների յեկամտաբերության ուղեցույց նորմաները։ Նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները համաձայնության գալով գավառական կամ սրանց համապատասխան և շրջանային գործադիր կոմիտեների հետ՝ վերոհիշյալ նորմաների հիման վրա՝ առանձին վարչա-տեղրիտորիալ միավորների համար սահմանում են կայուն նորմաներ։

Մանորուբյուն.—Կազակստանի Խնքնավար Խորհրդագոյ. Հանրապետության, Հյուսիսային Կովկասյան, Սիբիրյան և Հեռավոր Արևելյան յերկրների և Ուրալի մարզի յեկամտաբերության ուղեցույց նորմաները սահմանում են ՌՍՖՌՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը, իսկ նըրանց կազմի մեջ մտնող նահանգների և շրջանների համարսահմանում են Կազակստանի ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը յերկրային և մարզային Գործադիր կոմիտեները ըստ պատկանելու։

24. 22-րդ հոդվածում թվածներից բացի, արդյունաբերական բնույթ կրող գյուղատնտեսության հատուկ ճյուղերի (2-րդ հոդված «գ» կետը) հարկման դեպքում, այդ աղբյուրների յեկամտաբերության կայուն նորմաներն առանձին վարչատեղրիտորիալ միավորների համար սահմանում են նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները։

25. 21-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածների կարգով սահմանված յեկամտաբերության նորմաները՝ հրապարակելուց հետո հարկման տարվա ընթացքում փոփոխման չեն յենթարկվում։

26. Վարձակալական հողերից տնտեսության ստանալիք յեկամուտը հաշվելիս, այդ հողերի ամեն մեկ գեսաւատինի յեկամտաբերության նորմաները իջեցվում են։ Ի-

շեցման չափը 10.ից մինչև 25 տոկոսի սահմաններում վորոշում են դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, կամ սրանց հանձնարարությամբ՝ յերկրային, նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները։

Մանորուբյուն.—Այս հոդվածում մատնանշած գեղջը չի տարածվում այն տնտեսությունների վրա, վորոնք վարձով հող են վերցնում և միաժամանակ իրենք վարձով են տալիս։

27. Աշխատավարձից ստացվող յեկամուտը հաշվելիս հաշվառման և յենթարկվում տնտեսության կազմի մեջ մտնող աշխատավորների՝ հարկման նախընթաց տարվա ժայիսի մեկից, մինչև հարկման տարվա մայիսի մեկը փաստորեն ստացած աշխատավարձը. տնտեսության հարկման յենթակա յեկամուտի մեջ և առնվում աշխատավարձի այն վորոշ մասը, վորը կայուն տոկոսներով ամբողջ նահանգի կամ շրջանի համար սահմանում են նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները։ Մատնանշված կայուն տոկոսները չեն կարող գերազանցել՝

ա) իրենց գյուղական տնտեսությունում մշտապես ապրող աշխատավորների ստացած աշխատավարձի 15 տոկոսից և

բ) մշտապես իրենց գյուղական տնտեսությունից դուրս ապրող աշխատավորների աշխատավարձի, ինչպես նաև գրսի վաստակների 10 տոկոսից։

Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների վրա պարտականություն եղբավում միջոցներ ձեռք առնել վերացնելու տվյալ դաշնակից հանրապետության տերըիալիտիալ վրա աշխատավարձի հարկման խիստ տարբերակները։ Այդ նպատակով դաշնակից հանրապետությունների ժողովրդները նահանգական և շրջանային գործադիր կոմիտեներին ղեկավար ցուցմունքներ են տալիս, իսկ անհրաժեշտ գեպ-



քերում՝ կայուն տոկոսներով վորոշում են հարկման յենթակա աշխատավարձի մասը:

28. Տնախագործությունից, արհեստներից և մյուս վոչ գյուղատնտեսական զբաղմունքներից (բացի աշխատավարձից) ստացվող յեկամուտներն առանձին տնտեսությունների համար վորոշում են վոլոստային և ուայոնական հարկալին հանձնաժողովները. այդ յեկամուտները ստացվում են տնտեսության հարկի յենթակա յեկամտի մեջ այն մասով, վոր գաշնակից հանրապետությունների ժող. կոմ. խորհուրդների ղեկավար ցուցմունքների հաձայն՝ կայուն տոկոսներով վորոշում են նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները:

Պահություն.—Կոռպերացման յենթարկված տնայնագործների համար նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները սահմանում են հարկի յենթակա յեկամտի իշխցած տոկոս: Մատնանշված արտօնությունը տարածվում է միմիտյան այն տնախագործների վրա, վորոնք կոռպերատիվ ցանցի մեջ մտած ընկերությունների անդամներն են:

29. Դաշնակից հանրապետությունների ժող. կոմ. խորհուրդների, նահանգական և շրջանային գործադիր կոմիտեների 3-րդ, 5-րդ, 11-րդ հոդվածներով, 14-րդ հոդվածի 1-ին ծանոթությամբ, 17 րդ հոդվածի «դ» կետով և նրա 2-րդ ծանոթությամբ 21, 23, 24, 26, 27 և 28-րդ հոդվածներով նախատեսված բոլոր վորոշումները պետք են հրապարակված լինեն վոչ ուշ, քան հարկման տարիք մացիսի 15 թ:

ՀԱՏՎԱԾ III

ՀԱՐԿԻ ՀԱՇՎԵԼԸ

30. ՈՍԹԽՆՀ ԲԵԼՈՐՈՒՍԻԱԼԻ ԽՍՀ և ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ամեն մեկ անհատական կամ կողյեկամի տնտեսության հարկի չափը վորոշվում ե տնտեսության յեկամտի և շնչերի թվի համեմատ, ըստ վորում՝

Յուրաքանչյուր սուբյուց	Հետևող լինենող սառչին
Յուրաքանչյուր սուբյուց 2 կ.	Հետևող 20 ս. վեր մինչև 20 ս. լինենող յեկամտի վորում
Յուրաքանչյուր սուբյուց 3 կ.	Հետևող 30 ս. վեր մինչև 30 ս. լինենող յեկամտի ավելցումից դանձնում է
Յուրաքանչյուր սուբյուց 5 կ.	Հետևող 30 ս. վեր մինչև 40 ս. լինենող յեկամտի ավելցումով դանձնում է
Յուրաքանչյուր սուբյուց 10 կ.	Հետևող 40 ս. վեր մինչև 50 ս. լինենող յեկամտի ավելցումով դանձնում է
Յուրաքանչյուր սուբյուց 17 կ.	Հետևող 50 ս. վեր մինչև 60 ս. լինենող յեկամտի ա- վելցումով դանձնում է
Յուրաքանչյուր սուբյուց 21 կ.	Հետևող 60 ս. վեր մինչև 80 ս. լինենող յեկամտի ավելցումով դանձնում է
Յուրաքանչյուր սուբյուց 23 կ.	Հետևող 80 ս. վեր մինչև 100 ս. լինենող յեկամտի ավելցումով դանձնում է
Յուրաքանչյուր սուբյուց 25 կ.	Հետևող 100 ս. ավելի լին- ենող յեկամտի ավելցու- մով դանձնում է

Ըստ այս մեկ շունչ ունեցող տնտեսություններում, հաշված հարկի գումարից զեղչվում է 30 տոկոսը: Յերկու շունչ ունեցող տնտեսություններում, հաշված հարկի գումարից՝ զեղչվում է 20 տոկոս: Իսկ յեթե այդ շնչերից թեկուղ մեկը անաշխատունակ ե՝ զեղչվում է 30 տոկոս:

31. Ուկրաինայի Ս. Խ. Հանրապետությունում՝ յուրաքանչյուր անհատական տնտեսության հարկի չափը վորոշվում է համաձայն տնտեսության յեկամտի ընդհանուր գումարի, հանելով տնտեսության յուրաքանչյուր շնչի համար 20-ական ոութի, ըստ վորում՝



Յուրաքանչյուր սուր- լուց 3 կոտիկ	Տնակառիթյան տուազին 100 ս. յեկամուր գանձ- մում հ	
Յուրաքանչյուր սուր- լուց 6 կոտիկ	Տնակառիթյան յեկամուր 100 ս. վեր մինչ 200 ս. ավելցուկից գանձմում հ	
Յուրաքանչյուր սուր- լուց 18 կոտիկ	Տնակառիթյան յեկամուր 200 ս. վեր մինչ 300 ս. ավելցուկից գանձմում հ	
Յուրաքանչյուր սուր- լուց 17 կոտիկ	Տնակառիթյան յեկամուր 300 ս. վեր մինչ 400 ս. ավելցուկից գանձմում հ	
Յուրաքանչյուր սուր- լուց 19 կոտիկ	Տնակառիթյան յեկամուր 400 ս. վեր մինչ 500 ս. ավելցուկից գանձմում հ	
Յուրաքանչյուր սուր- լուց 22 կոտիկ	Տնակառիթյան յեկամուր 500 ս. վեր մինչ 600 ս. ավելցուկից գանձմում հ	
Յուրաքանչյուր սուր- լուց 25 կոտիկ		
Տնակառիթյան յեկամուր միացորդի 550 ս. վեր ա- վելցուկից գանձմում հ		

32. Ուզբեկստանի Սիէ և Թուրքմենստանի Սիէ յուրաքանչյուր անհատական տնտեսության հարկի չափը վորոշվում և տնտեսության յեկամուրի ընդհանուր գումարի համաձայն, ըստ վորում։ —

33. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա չեն այն անհատական անտեսությունները, վորոնց հարկի յենթակա յեկամուրի գումարը չի գերազանցում։ —

ա) այն դաշնակից հանրապետություններում, վորտեղ հարկի չափը վորոշվում ե տնտեսության շնչերի թվի համեմատ (30-րդ և 31-րդ հոդ.), մեկ և յերկու շուրջ ունեցող տնտեսությունն համար 90 սուբլուց, յերեք և չորս շուրջ ունեցողների համար 100 սուբլուց, հինգ և ավելի շուրջ ունեցողների համար 110 սուբլուց։

բ) այն դաշնակից հանրապետություններում, վորտեղ հարկի չափը վորոշվում ե անկախ տնտեսության շնչերի թվից (հոդ. 32-րդ) ամեն մեկ տնտեսության համար 90 սուբլուց։

Այն կոլեկտիվ տնտեսությունները, վորոնց հարկման յենթակա շնչապատկան յեկամուրի գումարը չի գերազանցում 20 սուբլ., չեն յենթարկվում միասնական գյուղատնտեսական հարկի։

Թանորուքուն. — Վոլոստային և ուայոնական հարկային հանձնաժողովներին իրավունք ե վերապահվում չկիրառել չհարկվող մինիմումն այն տնտեսությունների նկատմամբ, վորոնք պետական արհեստահարկի և յեկամուրահարկի որենքների կարգով հարկման յենթակա յեկամուրտներուն։

34. Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին իրավունք ե վերապահվում հանրապետության սահմանների մեջ մտնող նահանգների և շրջանների համար փոփոխել 33-րդ հոդվածում նշած չհարկվող մինիմումը, այն հաշվով, վորամբողջ հանրապետության մեջ այդ հոդվածով հարկից ազատվող սնտեսությունների ընդհանուր թիվը չը փոփոխվի։

35. Դաշնակից հանրապետությունների ժող. կոմ. խորհուրդներին իրավունք ե վերապահվում նահանգների

և շրջանների համար սահմանել զեղչերի փոնդեր՝ բոլորովին կամ մասնակի կերպով միանական գյուղատնտեսական հարկից ազատելու համար այն սակավունակ տնտեսությունները, վորոնց յեկամտի գումարը գերազանցում է չհարկվող մինիմումը։ Դաշնակից հանրապետության սահմաններում կատարվող այդ զեղչերի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի Խ. Ս. Հ. Մ. ժողկումխորհի կողմից վորոշված այն չափից, վորը տոկոսներով սահմանվում է տվյալ դաշնակից հանրապետությունից գանձվելիք հարկի գումարի նկատմամբ։

Այս հոդվածով նախատեսված զեղչերի գումարները նահանգական և շրջանալին գործադիր կոմիտեները բաշխույթ են ըստ վոլոստների և ռայոնների։

Ի հաշիվ այդ գումարների, վոլոստացին և ռայոնական հարկային հանձնաժողովները տնտեսություններին բոլորովին կամ մասնակի կերպով ազատում են հարկից։

36. Ուկրայնայի Ս. Խ., Ուզբեկստանի Ս. Խ. և Թուրքմենստանի Ս. Խ. հանրապետություններում կոլեկտիվ տնտեսությունների, ինչպես նաև Խ. Ս. Հ. Միության ամբողջ տերիտորիայի վրա խորհրդային տնտեսությունների (նրանց թվում է տոմարագրվածների) հարկի չափը վորոշվում է համաձայն՝

ա) տնտեսության, ինչինանուր հիմունքներով հաշված հարկի յենթակա յեկամտի գումարի,

բ) կոլեկտիվ տնտեսությունների համար տվյալ գավառի կամ ռայոնի, իսկ խորհրդային տնտեսությունների համար տվյալ նահանգի և շրջանի հարկաման յենթակա յեկամտի մեկ սուբլուն ընկնող հարկի միջին կոպարի։

ՀԱՏՎԱԾ IV

ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՀՈԳՈՒՏ ՏԵՂԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ

37. Տեղական խորհուրդների միջոցներին փոխանցված ծախքերը ծածկելու համար յուրաքանչյուր դաշնակից հանրապետության սահմաններում ստացված միասնական գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարից հատկացվում է $66^{2/3}$ տոկոս (յերկու յերրորդականը)։

38. Տեղական միջոցների ոգտին 37-րդ հոգվածի կարգով հատկացվող տոկոսները բաշխվում են հետեւյալ կերպով. —

ա) յուրաքանչյուր վոլոստի, ռայոնի և սրանց համապատասխանող վարչա-տերիտորյալ միավորի սահմաններում գանձված հարկի 40 տոկոսը (յերկու հինգերրորդականը) հատկացվում է տվյալ վոլոստի, ռայոնի կամ համապատասխան վարչատերիտորիալ միավորի բյուջեցին,

բ) նահանգական բաժանում չունեցող յուրաքանչյուր ինքնավար հանրապետության, յերկրի, մարզի և նահանգի, Անդրկովկասի Սոց. Ֆեդ. Խորհրդային Հանրապետությունում, նաև ինքնավար հանրապետության սահմանների մեջ չմանող գավառի, Ուկրայնայի, Բելորուսիայի և Թուրքմենստանի Սոց. Խոր. հանրապետություններում շրջանի սահմաններում գանձված հարկի $16^{2/3} \%$ (մեկ վեցերորդը), հատկացվում է տվյալ վարչատերիտորյալ միավորի բյուջեյին և կարող է ոգտագործվել ինչպես վոլոստային, ռայոնական և նրանց համապատասխանող բյուջեների ուժեղացման, նույնպես և մյուս տեղական բյուջեների յեկամտաբեր աղբյուրների ուժեղացման համար,

գ) յուրաքանչյուր դաշնակից հանրապետության սահմաններում գանձված միասնական գյուղատնտեսական հարկի 10 տոկոսը (մեկ տասներորդը) տվյալ հանրապե-

առության ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից
բաշխվում են նահանգական բաժանում չունեցող ինքնավար
հանրապետությունների, յերկիրների, մարզերի, նահանգ-
ների բյուջեների միջև, Անդրկովկասի Սոց. Ֆեդ. Խոր-
հուրդ. հանրապետությունում—նաև ինքնավար հանրա-
պետությունների մեջ չմտնող գավանների բյուջեների
միջև, Ուկրայնայի, Բելոռուսիայի և Թուրքիանատանի
Սոց. Խորհրդային հանրապետություններում—շրջանների
բյուջեների միջև, նրանց տնտեսական և ֆինանսական
գրության համեմատ:

39. Միասնական գյուղատնտեսական հարկի հաշվին
մուծվող գումարները բաշխվում են համապետական և
տեղական բյուջեների միջև համաձայն 37-րդ և 38-րդ
հոդվածների, աստիճանաբար նրանց գանձման չափով:

ՀԱՏՎԱԾ V

ԱՐՏՈՒՐԻԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆՏԱԿԻ

40. Միասնական գյուղատնտեսական հարկից, մինչև
Խ. Ս. Հ. Միության կառավարության հատուկ վորոշում
կայացնելը, ստորև թված վայրերում ազատվում են
բնակչության հետեւյալ կատեգորիաները՝

1) Բուրիատ-Մոնղոլիայի ինքնավար Ս. Խ. Հ. Բա-
ռնատվակի և Հյուսիս Բայկալյան ռայոններում բնակչու-
թյան առանձին կատեգորիաները՝ Բուրիատ-Մոնղոլիայի
հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական կոմիսարների Խորհրդի վո-
րոշմամբ.

2) Յակուտայի ինքնավար Սոցիալիստական Խորհր-
դային Հանրապետությունում.—

ա) տունգուսները, լամուտները, որոշոները, յուկա-
գիրները, չուփանները, ոսոկները և չուկչանները.

բ) Յակուտայի ինքնավար Սոց. Խորհրդային Հանրա-

պետության ժողովրդական կոմիսարների Խորհրդի վո-
րոշմամբ Բուլունսկի, Վերխուանսկի և Կայմի շրջաննե-
րում բնակչության առանձին կատեգորիաները:

3) Հեռավոր արևելյան յերկրում ա) գոլգերը, որոկնե-
րը, սամոգիրները, ոլչերը, մանեզրերը, սոլոնները, բի-
րարները, նեղիդալները (ամգունները) որոշոնները, որոշ-
ները, գլյալները, տունգուսները, եսկիմոսները, յուկա-
գիրները, դուրները, մանջունները, չուփանները, կոր-
յակները (կերեկներ), չուկչանները, իտելյինները (կամ-
չադալներ). Կարաչինները, ոլցուտորները, ալեռները, լա-
մուտները, ուղեխները, (թագերը), բ) Կամչատկալի և
Սախալինի շրջանների, Ամուրի Նիկոլայեվի շրջանի, Տու-
գուր. Չումուկայի, Ոխոտսկի և Ոլսկի ռայոնների և Ամու-
րի Սելմջին-Բուրեյինի ամբողջ բնակչությունը:

4) Սիբիրյան յերկրում. ա) սամոյեդները, ոստյակ-
սամոյեդները, յուրակները, գոլգանները (գոգոններ),
յենիսեյեցինները, (կետո) կարագամները, սոյոզները, տու-
գուսները, որոշոնները, ինչպես նաև անդրառներյան հա-
սարակությունների որդաներին պատկանող քաղաքացի-
ները. բ) Յերկրային գործադիր կոմիտեյի վորոշմամբ
բնակչության առանձին կատեգորիաները:

5) Ուրալի շրջանում գոգուլները, ոստյակները, սա-
մոյեդները և յուրակները:

6) Կոմիի (զիրյաններ) ինքնավար մարզում—ա) սա-
մոյեդները, բ) մարզալին գործադիր կոմիտեյի վորոշմամբ
բնակչության առանձին կատեգորիաները:

7) Մուրմանի նահանդում—ամբողջ աշխատավոր
բնակչությունը:

8) Արխանգելսկի նահանգում—սամոյեդները և Հյու-
սիսային Սառուցյալ ովկյանոսի կղզիների մշտական
բնակչությունը:

9) Դաղստանի ինքնավար Սոց. Խոր. Հանրապետու-
թյունում՝ նողայները.

10) Տաղջիկների ինքնավար Խորհրդային Հանրապետությունում—Լեռնա-Բադախշանի շրջանի բնակչությունը:

41. Միասնական գյուղատնտեսական հարկից ազատ փուլ են՝

ա) ամբողջովին պետական կամ տեղական բյուջերով պահպող փորձնական, փորձացուցադրական, սելեկցիոն, սերմային և անասնաբուծական կայանների տնտեսությունների, ազնվացեղ կեդանիների, տնտեսությունների և ձիաբուծարանների յեկամուտները.

բ) գյուղատնտեսական գիտական և ուսումնական հաստատությունների փորձնական և փորձացուցադրական տնտեսությունների յեկամուտները.

գ) գպրոցների, մանկական հիմնարկների, արդելատեղերի (փորոնց թվում և աղատությունից զրկվածների աշխատանքային գաղութների), ինչպես նաև պետական, հասարակական և պրոֆեսիոնալ հիմնարկությունների ու կազմակերպությունների հաշվին պահպող բժշկական հաստատությունների տնտեսությունների յեկամուտները.

դ) գիտական-ցուցադրական նշանակություն ունեցող կամ լուսավորության ժողովրդական կոմիսարիատների մարմինների կուլտուր-լուսավորական հաստատությունների պարենավորմանը ծառայող հասարակական ցանքերի յեկամուտները.

ե) վոլոստի և ռայոնական փոնդերից գատված և գյուղատնտեսական փոխադարձ ոգնության ընկերությունների և նրանց համապատասխանող կազմակերպությունների կողմից իրենց նպատակների համար ոգտագործվող հողամասերի վրա կատարված հասարակական ցանքերի յեկամուտները.

զ) գյուղական համայնքների համախոսականով համայնական փոնդից գատված հողամասի վրա՝ անձեռնմխելի սերմի պաշար տնտեսելու նպատակով հասարակության հաշվին կազմակերպված ցանքերի յեկամուտները,

ը) համայնական փոնդից, կամ պետական հողային գույքից, համայնական գուգավորման նպատակներով ոգտագործվող արտադրողների համար հատկացվող խոտ հարքների յեկամուտը՝ յուրաքանչյուրին Յ գեսյատինի սահմաններում:

42. 41-րդ հոդվածի կարգով հարկից ազատվող տընտեսությունների հողերի ցուցակները կազմում են նաև հանգական և շրջանային հարկային հանձնաժողովները կամ նահանգական գործադիր կոմիտեների հանձնարարությամբ՝ գավառական (կամ նրանց համապատասխանող) հարկային հանձնաժողովները (64 հոդ.):

43. Դաշտամշակության և գյուղատնտեսության հատուկ ձյուղերի յեկամուտները հարկի յենթարկելիս, հաշվի չեն տոնվում և չեն հարկվում՝

ա) անհարմար հողերը, նրանց մելիորացիայի յենթարկելու դեպքում ինչպես նաև արհեստական վոստովան յենթարկված և պատնեշված այն հողերը, փորոնք առաջ հարկման յենթակա տարածության մեջ չեյին մտնում, նրանց վրա՝ հողոգտագործողների միջոցներով կատարվող մելիորատիվ աշխատանքներն ավարտելուց հետո յերեք տարվա ընթացքում՝

բ) այն տարածությունները, վորոնց վրա հարկման նախընթաց տարվա ցանքը և խոտհարքի համար համահատած անտառամասերի կոճղահանություն և կատարվել.

զ) նոր պտղատու ծառաստանները հետեւյալ հասակում—հատիկավոր տեսակի ծառերի համար (խնձորի, տանձի)՝ տնկելու օրից մինչև 10 տարի, կորիզավորների համար (սալորի, զեղձի և ալին)՝ մինչև 6 տարի և պտղատու թփուտների համար՝ մինչև 3 տարի.

դ) պտղատու ծառերի և խաղողի նոր տնկարանները, տնկելու օրից սկսած 4 տարվա ընթացքում,

յե) նորատունկ խաղողի այգիների և արմատից կտրելու միջոցով յերիտասարդացվող խաղողի այգիները — տնկելուց և յերիտասարդացուսից հետո 5 տարվա ընթացքում. գյուղատնտեսական այլ մշակույթների համար անպետք, ավազոտ և քարքարոտ հողերի վրա տնկվող խաղողի այգիները - տնկելուց հետո 6 տարվա ընթացքում, ֆիլոքսերայի դիմացող պատվաստակալների վրա տնկվող խաղողի այգիները՝ տնկելուց հետո 7 տարվա ընթացքում և ֆիլոքսերայով վտանգված խաղողի այգիները.

գ) Սիրիյան յերկրում — ցանովի խոտերի և արմատապուների մշակույթի բռնած տարածությունները.

հ) ցանովի խոտերի սերմարուծարանները.

ը) գենագերչակի ցանքերը.

թ) կենափի ցանքերի տարածությունները.

ժ) գյուղական տնտեսություններին հատկացրած այն լրացուցիչ հողաբաժինները, վորոնք տրամադրված են մանկաւտների սաներին գյուղատնտեսական աշխատանքների հախապատրաստելու համար՝ հատկացնելու որից 3 տարի ժամանակամիջոցում:

44. Վուշի, կանեփի, շաքարաճակնդեղի և բամբակի ցանքերի տարածության ընդարձակմանն աջակցելու նպատակով, վուշի, կանեփի, շաքարաճակնդեղի և բամբակի ցանքերի մեկ գեսյատինի յեկամտաբերության նորմաները սահմանվում են հացահաս իկային մշակույթների բռն սահմանվում են հողերի կամ վարելահողի յեկամտի նորմաների կիսի չափով:

Այն շրջանների ցանքը, վորոնց վրա տարածվում են մատնանշված հարկային արտոնությունը՝ վուշի և կանեփի նկատմամբ, կազմվում են ՍԽՀՄիության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի, ՍԽՀ Միության Ներքին և Արտաքին Առեւտրի Ժողովրդական Կոմիսարիատի և ՌՍՖՀ 3 բելորուսիայի ՍԽ Հանրապետության Հողագործու-

թյան Ժողովրդական Կոմիսարիատների համաձայնությամբ:

45. Անասունների յեկամուտների հարկը սահմանելիս հարկման չեն յենթարկվում —

ա) հողային մարմինների հավանությունը գտած ցուլերը.

բ) պետական մատյաններում տոմարագրած խոշոր յեղջուրավոր ազնվացեղ անասունները.

շ) պետական մատյաններում տոմարագրած ազնվացեղ զամբիկները և հովատակները.

դ) հողային մարմինների մատյաններում տոմարագրած սեամորթ բուխարական վոչխարները.

յե) մերինոս վոչխարները.

զ) տեղական բուծարանների բոլոր տեսակի վոչխարները՝ նրբաժաղ, կիսակոշտաբուրդ և կոշտաբուրդ.

ե) հողային մարմիններում տոմարագրած հասարակական բեղմանավորման կայաններում գտնվող ազնվացեղ վարագները.

ը) հողային մարմինների մատյաններում տոմարագրած խոզաբուծարանների ազնվացեղ խոզերը:

Արգյունաբերական յուղագործության շրջանների համար դաշնակից հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարիատների խորհուրդները սահմանում են խոշոր յեղջուրավոր անասունի յեկամտաբերության իջեցրած նորմաներ:

46. Զիարուծական լնկերություններին, խմբական տնտեսություններին և անհատական տնտեսություններին, վորոնք դաշնակից հանրապետությունների հողագործության ժողկումատների հետ կնքած արտիկ պայմանագրերով իրենց հատկացրած հողամասի վրա յերամներով՝ ուղարկած ծիեր են աճեցնում՝ միասնական գյուղատնտեսական հարկի նկատմամբ տրվում են առաջին 3 տարվա ընթացքում հետևյալ արտոնությունները. —

ա) հարկից ազատվում են հողալին մարմինների մատչաններում տոմարագրած ազնվացեղ կազմ ունեցող յերաժամկերի, ինչպես նաև ռազմական փարչություններին տրվող կամ արտադրողների յերաժամկերում թողնվող աճի յեկամուտը,

բ) հարկից ազատվում են ամեն մի ձիու համար (զամբիկ, հովատակ և մեկտարուց մեծ մատղաշ) Յական դեսյատինի չափով խոտհարքի և արտատեղիի յեկամուտները:

47. Հողաշխարարության և նոր վայրեր տեղափոխվելու կանոնների կարգով տեղափոխվող և վերաբնակվող աշխատավոր հողոգտագործողների և նրանց միությունների (արտեխներ, կոմմունաներ, ընկերություններ) տնտեսություններին միասնական գյուղատնտեսական հարկի նրկատմամբ տրվում են հետեւալ արտօնությունները:—

ա) այն տնտեսությունները, վորոնք գաղթել և վերաբնակվել են այնպիսի վայրերում, ուր տնտեսություն կազմակերպելու համար հողագործներից պահանջվում է կողահանության և այլ մելիորատիվ աշխատանքների միջոցով մշակելի հողեր պատրաստել, ազատվում են հարկից տեղափորման ժամանակից սկսած առաջին 5 տարվա ընթացքում,

բ) այն տնտեսությունները, վորոնք գաղթել և վերաբնակվել են այնպիսի վայրերում, վորտեղ տնտեսություն կազմակերպելու համար պահանջվում է խամ հողերի մշակում կամ հողագործության կատարելագործված ձեւի կիրարկում (բազմագաշտյան ցանքաշրջանառություն խոտաբույերի և շարքահերկ մշակույթների միջոցով, իսկ չորային շրջաններում՝ յերաշտի դիմացող բույսերի, սերկացիոն սերմերի ցանքեր) այդպիսի տնտեսություններն իրենց տեղափորման ժամանակից առաջին 3 տարվա ընթացքում ազատվում են հարկից,

գ) այն տնտեսությունները, վորոնք գաղթել և վե-

րաբնակվել են այնպիսի վայրերում, վորտեղ չի պահանջվում խամ հողերի մշակություն և հողաշխարարության կարգով հատկացված հողամասի վրա մշտական տնտեսություն վարելու համար անհրաժեշտ շենքերի կառուցում, հարկից ազատվում են մի տարվա ընթացքում նոր սահմաններում հողի ոգտագործման անցնելու բովելից:

Թանօրություն — 1. Գաղթականների և վերաբնակիչների համար այս հոդվածով սահմանված արտօնությունները տարածվում են նաև այն ներգաղթողների ու հետգաղթողների վրա, վորոնք աշխատում են գյուղատնտեսության ասպարիգում:

2. Ուղբեկների և թուրքանների Սեհ 1925 և 1926 թ. թ. հողալին բարենորոգումների կարգով հող և անասունները ստացած չքավոր տնտեսությունների համար 1927—28 թ. հարկի չափն իջեցվում է՝ տնտեղի և շինություններ ունեցող տնտեսությունների համար՝ 25 տոկոսով, իսկ նոր կազմված տնտեսությունների համար 75 տոկոսով: Ուղբեկների Սեհ Զերավշանի մարզում հողալին բանենորոգումների կարգով հող և անասուն ստացած տնտեսություններն ազատվում են 1927—28 թվի միասնական գյուղհարկից:

3. Սախալին կղզու հիմնական բնակիչների թվին չըպատկանող և պլանացին կարգով այդ կղզու հողագործական շրջաններում տեղավորվող գաղթականներն ու նրանց միություններն ազատվում են միասնական գյուղատնտեսական հարկից նախադես բնակված հողարաժիններում տեղափորվությունների վեպքում՝ 10 տարվա ընթացքում, իսկ անբնակ հողամասերում տեղավորվելու գեպքում, 15 տարվա ընթացքում:

48. Կոլլեկտիվ և կոոպերատիվ տնտեսություններին վորոնք հողը մշակում են առանց վարձու բանվորների՝ համայնական ձեռվ, միասնական գյուղհարկի նկատմամբ տրվում են հետեւալ արտօնությունները:—

ա) կոլլեկտիվ տնտեսությունները, վորոնց չնչապատկան հարկի յենթակա յեկամուտը, տվյալ գավառի (կամ համապատասխան վարչատերի միավորի) կամ շրջա-

նի անհատական տնտեսությունների շնչապատկան միջին յեկամտից ավելի չե-ստանում են հարկի գումարից 25 տոկոսի չափ զեղչ.

բ) կոլեկտիվ տնտեսությունների համար, վորոնց շնչապատկան յեկամուտը բարձր ե գյուղական անհատական տնտեսությունների միջին գավառական շնչապատկան յեկամտից-հարկը հաշվում ե, ըստ մատնանշված միջն յեկամտի և այս ձևով հաշված հարկի ամբողջ գումարից զեղչվում ե 25 տոկոս.

գ) տունց վարձու բանվորների, համայնական ձեռվ հողը մշակող կոոպերատիվ տնտեսություններին զեղչ ե արվում հարկի ընդհանուր գումարի 10 տոկոսի չափով:

49. Միասնական գյուղատնտեսական հարկը վորոշելու համար տնտեսության շնչերի հաշվառման ժամանակ նրանց թվի մեջ են առնվում տնտեսության կազմի մեջ մտնող՝

ա) զինվորական, շարքային և հրամանատարական կազմի ծառայողները (հրամանատարական, վարչական, քաղաքական, բժշկական և անասնաբուժական), վորոնք գտնվում են Բանվորա-գյուղացիական կարմիր Բանակի բնակազմի մշտական ծառայության, ինչպես նաև պետական Քաղաքական Վարչության զորամասերի և պահակախմբերի մեջ. հաշվելով նաև նրանց, վորոնք կանչված են Բանվորա-գյուղացիական կարմիր Բանակի բնակազմի մեջ հարկման տարվա աշնանը.

բ) Նախազինակոչային կամ արտազորային պարապմունքները և վարժական հավաքները յեկավարելու համար, վորպես հրահանգիչներ կանչված՝ տերիտորյալ (յերկրային) մասերի փոփոխական կազմում. յերկարատե արձակուրդում և Բանվորա գյուղացիական կարմիր Բանակի պահաստում գտնվող հրամանատարական կազմի անձինք.

գ) հարկման նախընթաց տարվա մարտի մեկից հետո Բանվորա գյուղացիական կարմիր Բանակի բնակազմի մշտական ծառայությունից յերկարատե արձակուրդ ստացած, պահաստի մեջ, կամ ծառայությունից բոլորովին արձակված անձինք:

դ) պատերազմի և աշխատանքի հաշմանդամներին, վորոնք պատկանում են հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբակներին.

50. Այս անտեսությունները, վորոնց կազմում կան 49-րդ հոդվածում թված անձինք, հարկի նկատմամբ ստանում են հետևյալ արտոնությունները.—

Յեթե տնտեսության մեջ սության մեջ չկան ուրիշ կամ ուրիշ կամ աշխատունակ աշխատունակ աղամարդիկ. աղամարդիկ:

ա) Տնտեսություններ, վորոնց կազմի մեջ են մտնում գերակետիկ ծառայության կրտսեր հրամանատարական կազմին պատկանող անձինք.՝

Յեթե տնտեսության՝ հարկի յենթակա յեկամուտը չի գերազանցում չհարկվող մինիմումի կրկնապատիկը.՝

Յեթե մատնանշած յեկամուտը գերազանցում է հարկվող մինիմումի կրկնապատիկը.՝

բ) Տնտեսություններ, վորոնց կազմի մեջ են մտնում 49-րդ հոդվածում հիշված մուտքային կամ անձինք.՝

Յեթե տնտեսության հարկի յենթակա յեկամուտը չի գերազանցում չհարկվող մինիմումի կրկնապատիկը.՝

Յեթե այդ յեկամուտը գերազանցում է չհարկվող մինիմումի կրկնապատիկը.՝

Աղամարդում Աղամարդ են հարկի վում են հարկի յերեք քառ հարկի ոորդից. կեսից.

Աղամարդում են հարկի յերեք քառորդից Աղամարդ են հարկի յերեք քառորդից

Աղամարդ են հարկի կիսից. մեկ քառորդից

Մանոքություն. — Եր կազմի մեջ 49-րդ հոդվածում — թված անձինք ունեցող կոլեկտիվ անսեսությունների հարկման յեկամտի ընդհանուր գումարից զուրս են հանդում հիշալ անձանց վրա ընկնող յեկամուանների գումարը:

51. Այն անտեսություններում, վորոնց մեջ մանում են հեծյալ տերիտորիալ մասերի փոփոխական կազմին պատկանող անձինք, վորոնք կանչված են ուսուցման և վարժական հավաքների՝ սեփական շաբային ձիերով, այդ ձիերի յեկամուան հարկի չի լենթարկվում:

52. Այն անտեսությունները, վորոնց կազմի մեջ են մանում ուսուցման և հավաքների համար կանչված տերիտորիալ մասերի փոփոխական կազմին պատկանող անձինք, միասնական գյուղհարկը կարող են վճարել իրենց վերաշառնալու մոմենտից մեկ ամիս հետո, ըստ վորում այդ ժամանակի համար տույժ չեն վճարում:

53. Բ. Գ. Բ. Բնակազմից յերկարատեաւձակուրդ ստացած պահեստի կամ բոլորովին ծառայությունից ազատված անձնավորությունների կազմակերպած կոլեկտիվ տնտեսությունները բոլորովին ազատվում են միասնական գյուղհարկից, սառորե թված բոլոր պայմանների առկայության դեպքում:

ա) յեթե կոլեկտիվի կազմակերպության ժամանակից անցել ե վոչ ավելի, քան 2 տարի:

բ) յեթե կոլեկտիվը կազմակերպված ե այդ անձնավորությունների Բ. Գ. Կարմիր Բանակից ազատվելու առաջին տարում:

գ) յեթե այդ անձանց թիվը կոլեկտիվի աշխատունակ անդամների ընդհանուր թիվը կիսից պակաս չե:

54. 49-53-րդ հոդվածների համաձայն արտօնություններով ոգտվող անտեսությունները այս կանոնագրության մյուս հոդվածներով նախատեսնված արտօնություններից ոգտվելու իրավունքից չեն զրկվում:

55. Իրենց ժառանգության պարտականությունները

կատարելիս, կամ դրա հետ կազմած դեպքերում՝ սպանված անտառային պաշտոնյաների արքիներին և անչափահաս զավակներին պատկանող աշխատավորական գյուղական անտեսությունները հիշալ պաշտոնիայի մահից հետո, հինգ տարվա ընթացքում, ազատվում են միասնական գյուղաանտեսական հարկից:

56. Միասնական դյուղհարկի չի լենթարկվում վոսկի և լուսնո կի (պլատինա) գտնելու զբաղմունքի լեկամուտը:

57. Տարերային աղետներից տուժած անտեսությունները, հարկից լրիվ կամ մասամբ ազատվում են վոլոստային և ռայոնական հարկացին հանձնաժողովների կողմից, համաձայն անտեսության կրած ընդհանուր վնասի չափի և անտեսության կարողության:

ՀԱՍՎԱԾ

ՀԱՐԿԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

58. Դաշնակից հանրապետությունների համար հարկի վճարման հետեւյալ վերջնական ժամկետներն են նշանակվում՝ ընդհանուր գումարի նկատմամբ ամբ տոկոսային հարաբերությամբ:

Դաշնակ. հանրապետություններ Առ 1-ն Առ 1-ն Առ 1-ն Առ 1-ն Առ 1-ն
տություններ նոյեմբերի դեկտեմբերի հունվարի մարտի ապրիլի
ընդհանուր բերբ բերբ բերբ եր

Պետք ե գանձվի հանրապետության հարկի ընդհանուր գումարի տոկոսը:

Ո. Ա. Ֆ. Խ. Հ.	35	10	30	15	—	10
ՈՒ. Ա. Խ. Հ.	45	20	15	10	10	—
Բ. Ա. Խ. Հ.	25	25	20	10	10	10
Ա. Ա. Ֆ. Խ. Հ.	25	10	35	10	10	10
Ռուբեկ. Ա. Խ. Հ.	50	—	50	—	—	—
Թուրք. Ա. Խ. Հ.	50	—	50	—	—	—

59. Դաշնակից Հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները վորոշում են նահանգի և շրջանի համար վճարման ժամկետները, իսկ նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները՝ զավառական (կամ նրանց համապատասխանող) և ռայոնական գործադիր կոմիտեների հետ համաձայնելով ժամկետ են նշանակում վոլոստի և ռայոնի համար:

Այս հոդվածում թված մարմիններն այդ ժամկետները նշանակում են այն հաշվով, վորպեսզի վերադաս մարմինների կողմից սահմանված ժամկետում յուրաքանչյուր վարչատերիտորիալ միավորից ստացվի առնվազն այնքան հարկ, վորը այդ ժամկետին պետք է գանձվեր:

Թանօրություն.—Կաղակստանի ինքնավար Ս. Խ. Հ. Հյուսիսային կովկասյան, Միբիրյան և Հեռավոր-Արեւելյան յերկիրների և Ուրալի մարզի համար հարկի վճարման ժամկետները սահմանում ե Ռ.Ս.Ց.Խ.Հ. Ժողովրդական կոմիսարների խորհուրդը, իսկ նրանց կազմի մեջ մտնող նահանգների և շրջանների համար՝ կաղակստանի ինքնավար Ս.Խ.Հ. Ժողկոմիտորի, յերկային և մարզային գործադիր կոմիտեներն ըստ պատկանելուն:

60. Վոլոստների և շրջանների համար 59-ըդ հոդվածի կարգով սահմանված ժամկետները պարտադիր կերպով հրապարակվում են ի գիտություն հանրության վոչ ուշ, քան հարկային տարվա մայիսի 15 ը, հայտարարվում են գյուղական համայնքի ժողովներում, մացվում են հարկաթերթերի մեջ և հարկման ամբողջ տարվա ընթացքվում վոչ մի փոփոխման չեն յենթարկվում:

ՀԱՏՎԱԾ VII

ՀԱՐԿԸ ԳԱՆՉՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

61. Միանական գյուղհարկի վճարողների գյուղական ցուցակները կազմելու, յուրաքանչյուր տնտեսության հարկման յենթակա յեկամտի աղբյուրներն ու շնչերը հաշվե-

առման յենթարկելը, ինչպես նաև հարկատուներին հարկաթերթեր հանձնելու պարտականությունները դրվում են գյուղխորհրդների և նրանց համապատասխանող մարմինների վրա, վորոնք աշխատելու յեն վոլոստային և ռայոնական գործադիր կոմիտեների ղեկավարությամբ:

62. Հարկատուների հարկվող յեկամուտը, հարկը հաշվելը, հարկաթերթ կազմելը, հարկի վճարումներն ընդունելը, ավելի վճարս ծները վերադարձնելը ու հաշվակցելը (զաւետ), ինչպես նաև հարկի գանձման ընդհանուր հսկողությունն ուղեկավարությունը, նահանգական և շրջանային գործադիր կոմիտեների հայեցողությամբ—դըրվում են վոլոստային գործադիր կոմիտեների կամ գյուղխորհրդների վրա:

63. Յերկրային, նահանգական, շրջանային, գավառական և նրանց համապատասխանող գործադիր կոմիտեներին կից կազմակերպվում են հարկային հանձնաժողովներ հետեւյալ կազմով՝

ա) նախագահ, վորին նշանակում ե համապատասխան գործադիր կոմիտեն,

բ) համապատասխան ֆինանսական, հողային ու վիճակագրական մարմինների և պրոֆմիությունների ներկայացուցիչներ,

գ) փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերությունների, կամ նրանց համապատասխան կազմակերպությունների պատշաճ մարմնի ներկայացուցիչը:

Թանօրություն.—Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհրդներին իրավունք և վերապահվում իրենց վորոշված կազմով հանրապետական հարկային հանձնաժողովներ կազմակերպել:

64. 63 ըդ հոդվածում թված հարկային հանձնաժողովների վրա վրավում ե՝ 1) հետեւյալ հարցերի նախնական քընությունը.—

ա) մանր անասունների և գյուղատնտեսության հատուկ ճյուղերի յեկամուտների հարկման մասին (հոդ. 3. ըդ),

բ) 5-րդ հոդվածով նախատեսված քաղաքային վարչերի կամ անձանց կատեգորիաների ցուցակներ կազմելու մասին,

գ) 11-րդ հոդվածի կարգով վոչ գյուղատնտեսական վաստակները միասնական գյուղհարկից ազատելու մասին,

դ) գաշտամշակության յեկամուտների հարկման կարգի մասին (14-րդ հոդ. 1-ին ծանոթություն),

յԵ) հանկման միջոցին հաշվառման չինթարկվող մանրը անասունների քանակի մասին (17-րդ հոդվածի 2-րդ ծանոթություն),

զ) առանձին աղբյուրների յեկամտաբերության նորմաները սահմանելու մասին (21, 23 և 24 հոդվածներ),

ե) վարձով վերցրած հողերի յեկամտաբերության նորմաների գեղչի տոկոսները վորոշելու մասին (հոդ. 26),

ը) վոչ գյուղատնտեսական վաստակներից ստացած յեկամուտների հարկման յենթակա մասի տոկոսները վորոշելու մասին (հոդ. 27 և 28),

թ) չհարկվող մինիմումի չափը վորոշելու մասին (հոդ. 34),

ժ) սակագունակ տնտեսություններին վերապահված գեղչի փոնդը բաշխելու մասին (հոդ. 35),

ի) հարկը վճարելու ժամկետները վորոշելու մասին, (հոդ. 59),

2) 41-րդ հոդվածի համաձայն հարկից ազատվող տնտեսությունների և հողերի ցուցակը սահմանելը (հոդ. 42).

3) համապատասխան դեպքերում ստրագաս հարկային հանձնաժողովների վորոշումների գեմ արված բողոքները լուծելը (հատված VIII-ըդ):

65. Վոլոստային և ռայոնական գործադիր կոմիտեներին կից կազմակերպվում են հարկային հանձնաժողովներ՝ կազմով:

ա) նախագահ, վորք հանդիսանում եւ վոլոստային, ուայոնական գործադիր կոմիտեյի նախագահը.

բ) վոլոստային (ռայ. ն.) ֆինանսական, հողային և պրոֆեսիոնալ մանմինների ներկայացուցիչներ.

գ) յերկու գյուղացի, վորմայից մեկին նշանակում եւ վոլխագարձ ոգնության գյուղացիական ընկերության վոլոստային (ռայոն.) կոմիտեն, կամ նրան համապատասխանող այլ կազմակերպություն, իսկ մյուսը՝ ընտրվում եւ գյուղի հասարակական ժողովում՝ համապատասխան գյուղի գործերը քննելու ժամանակ մասնակցելու համար:

Ծանոթություն. — 1. Շրջանային գործադիր կոմիտեներին իրավունք է վերապահվում ռայոնի հարկային հանձնաժողովի կազմի մեջ վոլխագարձ ոգնության գյուղացիական ընկերության կոմիտեյի ներկայացուցչի փոխարեն մացնել գյուղական կոմիտեյի ներկայացուցչին՝ համապատասխան գյուղերի գործերի քննությանը մասնակցելու համար:

2. Գյուղի հասարակական ժողովներում ընտրված (այս հոդվածի «բ» կետ) հանձնաժողովի անդամ գյուղացիները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար տեղական բլուջեյի միջոցներից ստանում են վարձագրություն, վորի չափը վորոշում են նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները:

66. Վոլոստի և շրջանի հարկային հանձնաժողովների վրա դրվում եւ. —

ա) 11-րդ հոդվածի «բ» կետով նախատեսված դեպքերում առանձին չքավոր անտեսությունների վոչ գյուղատնտեսական վաստակները հարկից ազատված դեպքերից:

բ) հարկատունների՝ վոչ գյուղատնտեսական վաստակներից ստացած յեկամտի չափի վորոշելը (հոդ. 28),

շ) 33-րդ հոդվածի ծանոթություններում մատնանրածած տնտեսությունների հարկման յենթարկելու հարցը լուծելը,

գ) 35-րդ հոդվածի կարգով սակագունակ անտեսություններին արտօնությունները տալը,

իե) բնական աղեաներից տուժած, անտեսությունները բոլորովին կամ մասնակի կերպով հարկից ազատելը (հոդ. 57) և —

յ) յեկամտի աղբյուրների սխալ հաշվի առնելու, յեկամտի (բացի այս հոդվածի «ա» կետում նշած յեկամուտներից) գումարները և հարկի չափը սխալ հաշվելու մասին հարկատուններից (բացի կոլեկտիվ և խորհրդային անտեսություններից) ստացված բողոքների քննել ու լուծելը:

67. Նահանգական և շրջանային գործադիր կոմիտեներին իրավունք ե վերապահվում կազմակերպել գյուղական հաշվառման հանձնաժողովներ հետևյալ կազմով՝ գյուղդիմուրների նախագահ, փոխսպարձ ո գնության գյուղացիական ընկերության (կամ նրան հանապատասխանող կազմակերպության) նսխագահ և գյուղի հասարակական ժողովի կողմից ընտրված մեկ անձնավորություն։ Այդ հանձնաժողովի վրա կարող են գրվել հետևյալ պարտականությունները։

ա) գյուղական ցուցակներ կազմելը, յեկամուտի աղբյուրների և շնչերի հաշվառումը և —

բ) արտօնությունների և զեղչի մասին հարկատունների հարուցած միջնորդությունների նախական քննությունը։

ՀԱՏՎԱԾ VIII

ՄԻԶՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ
ԲՆԱԿԻԹՅԱՆ ԿԱՐԳԸ

68. Միասնական գյուղատնտեսական հարկի վերաբերյալ բոլոր միջնորդություններն ու բողոքները արվում են վոլոստի և ույոնի գործադիր կոմիտեներին, վորոնք

պարտավոր են այդ միջնորդություններն ու բողոքները անմիջապես հանձնել համապատասխան հարկային հանձնաժողովներին։ Վոլոստի և ույոնի հարկային հանձնաժողովների վորոշումների գետ հարկատունները բողոք են տալիս վոլոստային և ույնական գործադիր կոմիտեների միջոցով՝ գավառական և շրջանային հարկային հանձնաժողովներին, վորոնց վորոշումներն այդ բողոքների նկատմամբ համարվում են վերջնական։

Մանրություն.—1. Կոլեկտիվ և խորհրդային արնեսությունների միջնորդություններն ու բողոքները քընում են գավառական և շրջանային հարկային հանձնաժողովները, վորոնց վորոշումների գետ կարելի չե բողոքել անմիջական վերադարձ հարկային հանձնաժողովներին։


2. Հարկային հանձնաժողովները պարտավոր են ստացված միջնորդություններն ու բողոքները քննելու ստանալու որից մեկ ամսվա ընթացքում։

69. Միջնորդություններ և բողոքներ տալու համար սահմանվում են հետևյալ ժամկետները։

ա) յեկամտի աղբյուրները և շնչերի թիվը սխալ հաշվառման յենթարկելու, յեկամտի գումարների և հարկի չափը սխալ հաշվելու վերաբերյալ բողոքները, այլ և արտօնություններ տալու մասին հարուցվագ միջնորդությունները, բացի տարերային աղեաների առթիվ հարուցվագ միջնորդություններից (այս հոդվածի «բ» կետը), պետք ե արվեն վոչ ուշ, քան հարկաթերթը վճարողին հանձնելու որից մեկ ամսվա ընթացքում,

բ) տարերային աղեաների հետևանքով արտօնություններ ստանալու մասին միջնորդությունները արվում են աղետից հետո՝ մեկ ամսվա ընթացքում։

70. Միջնորդություն հարուցելը և բողոք տալը չի կատեցնում հարկի գանձումը։



ՀԱՍՎԱԾ IX

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

71. Յուրաքանչյուր տնտեսության հարկի յենթակա յեկամտի աղբյուրները և շնչերի թիվը ճիշտ և ժամանակին հաշվառման յենթարկելու, հարկման յեկամուտը և հարկի չափը ճիշտ և ժամանակին հաշվելու, հարկաթերթերը ժամանակին հանձնելու, ինչպես նաև հարկը ժամանակին և լրիվ գանձելու պատասխանատվությունը գրվում ե վոլոստավին և ույսնական գործադիր կոմիտեների, գյուղական խորհուրդների և նրանց համապատասխան մարմինների վրա:

72. Հարկը գանձող մարմիններին սխալ տեղեկություններ տալու համար (հատված VIII-րդ) հարկատուները պատասխանատվության են յենթարկվում քրեական կարգով:

73. 59-րդ և 60-րդ հոդվածների կարգով սահմանված և հրապարակված ժամկետներում հարկը չվճարող հարկատունների նկատմամբ գործադրվում են հարկերի գանձման կանոնադրությամբ նախատեսված միջոցները:

ՀԱՍՎԱԾ X

ՀԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

74. Այս կանոնադրության կիրարկման վերաբերյալ հրահանգների և կանոնների հրապարակումը հանձնարարվում է Խ.Ս.Հ. Միության ֆինանսների ֆողովրդական կոմիտարիատին:

Խ. Ս. Հ. Մ. Կենտգործկոմի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

Խ. Ս. Հ. Մ. Ժողկոմինիստրի նախագահ՝ Ա. ՌԻԿՈՎ

Խ. Ս. Հ. Մ. Կենտգործկոմի Քառուուղար՝ Ա. ՅԵՂԻԿԻՉԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 2-ն ապրիլ 1927 թ.

